ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 51-Ա

Ք.ԹՈՒՄԱՆՅԱՆ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔՈՋՅԱՆ ՌԱՖՖԻ ՌԱԶՄԻԳ ՊԵՏՐՈՍԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԴՌՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի II-րդ բաժնի պահանջներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Քոջյան Ռաֆֆի Ռազմիգ Պետրոսի կողմից կատարված ինքնակամ ձևափոխությունները չի խախտում այլ անձանց իրավունքները,օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելուիրավունք,այդ ձևափոխումներն իրականացված չեն աստիճանավանդակների կամ շենքի արտաքին պատերի հաշվին, չեն փոխվել կրող կոնստրուկցիաները և հիմք ընդունելով համապատասխան որակավորում ունեցող ԱՁ <<Տիգրան Փոթիկյան>>-ի կողմից չափագրված հողամասի և շինությունների հատակագծերը և Քոջյան Ռաֆֆի Ռազմիգ Պետրսի /մուտք՝ 11.05.2021թ. թիվ 169/ դիմումը՝ որոշում եմ.

1. Օրինականացնել Քոջյան Ռաֆֆի Ռազմիգ Պետրոսի սեփականությունը հանդիսացող 06 - 004-0006-0013 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արտադրական գործառնական նշանակության շինություններում ինքնակամ կառուցված 59,38քմ մակերեսով աստիճանները, ինքնակամ բացված 28 դռները և պատուհանները ճանաչել օրինական:

2. Քոջյան Ռաֆֆի Ռազմիգ Պետրոսին՝ համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին վճարել 40974,5 /քառասուն հազար ինը հարյուր յոթանասունչորս դրամ հիսուն լումա/,որից պատուհանների և դռների օրինականացման համար՝ 9800 /ինը հազար ութ հարյուր/ դրամ, ինքնակամ կառուցված աստիճանների համար՝ 31174,5 /երեսունմեկ հազար հարյուր յոթանասունչորս դրամ հիսուն լումա/ դրամ:Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. մայիսի 24
ք.Թումանյան